



**ԱՆԱԼՈԳԱՅԻՆԻՑ ԹՎԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ
ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
*Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի զեկույցը¹***

Նախաբան

Սկսած 2010 թվականից, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն դիտարկում է Հայաստանում անալոգայինից թվային հեռարձակմանն անցնելու գործընթացը: 2014թ. ապրիլից մինչև օգոստոս ԽԱՊԿ-ն ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի աջակցությամբ անցկացրեց հերթական մոնիտորինգը այդ գործընթացի հետազոտման եւ գնահատման համար:

Ուսումնասիրությունը վերաբերում է թվայնացման երեք բաղադրիչների. օրենսդրական, տեխնիկական եւ սոցիալական եւ նախատեսում է.

ա. «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ գործող օրենքում եւ հարակից օրենսդրության մեջ հիմնախնդիրների բացահայտում եւ հաղթահարում,

բ. թվային հեռարձակման համակարգի ստեղծման եւ դրա կառավարման մեխանիզմներին առնչվող միջոցառումների հետազոտում եւ գնահատում,

գ. թվայնացմանն առնչվող սոցիալական հիմնախնդիրների ուսումնասիրություն եւ դրանց լուծմանը, ինչպես նաեւ հասարակական համերաշխության մթնոլորտի ձեւավորմանը միտված առաջարկությունների մշակում:

Իրականացվող միջոցառումների վերլուծության ժամանակ հաշվի է առնվել թվայնացման միջազգային փորձը: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են հետեւյալ փաստաթղթերը.

¹ Մույն զեկույցը պատրաստվել է Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի կողմից, ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում: Փաստաթղթում արտահայտված տեսակետները հեղինակներին են եւ անպայման չէ, որ արտացոլեն ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ Երևանի գրասենյակի տեսակետները:

1. «Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգը», որը հաստատված է ՀՀ կառավարության 2009թ. նոյեմբերի 12-ի թիվ 47 որոշումով:

2. «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարված բոլոր փոփոխությունները եւ լրացումները՝ սկսած 2010 թվականի հունիսի 10-ից, երբ այն արմատապես փոխվեց թվային հեռարձակման անցումը կարգավորելու նպատակով, մինչեւ 2014-ի սեպտեմբեր:

3. «Պետական տուրքի մասին» եւ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքները:

4. «Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգի վերլուծությունը», որը պատրաստել են Տալինի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսոր, դոկտոր Քերթին Նայման-Մետկալֆը եւ Մոսկվայի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի պրոֆեսոր, դոկտոր Անդրեյ Ռիխտերը (վերլուծությունը կատարվել է ՋԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի պատվերով):

5. «Նկատառումներ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում առաջարկվող փոփոխությունների վերաբերյալ» (հեղինակ՝ դոկտոր Անդրեյ Ռիխտեր, ՄՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի պրոֆեսոր, 2010 թվական): Փաստաթուղթը պատրաստվել է ՋԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի պատվերով:

6. «Լրացումներ դիտողություններին, որոնք արվել են ՋԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակի կողմից՝ Հայաստանի Հանրապետությունում հեռարձակման օրենսդրության մեջ առաջարկվող փոփոխությունների, ինչպես նաեւ թվային համակարգով հեռուստառադիոհեռարձակման անցնելու սկզբունքների վերլուծության առնչությամբ» (հեղինակ՝ դոկտոր Անդրեյ Ռիխտեր, ՄՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի պրոֆեսոր, 2010):

7. ՀՀ կառավարության՝ 2014 թ. փետրվարի 27-ի թիվ 193-N որոշումը, որով հաստատվել է թվային հեռարձակման անցնելու միջոցառումների իրականացման նոր ժամանակացույցը:

8. Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1609 (2008 թ.), 1620 (2008թ.), 1636 (2008թ.), 1643 (2009թ.), 1677 (2009թ.) բանաձեւերը:

9. Եվրախորհրդի Նախարարների խորհրդի թիվ R (96) 10, R (99) 1, R (2000) 23 հանձնարարականները:

Թվայնացման գործընթացի մշտադիտարկման ընթացքում հետազոտող խմբի տեղեկատվության կարելու աղբյուրներ էին հեռարձակման ոլորտի համար պատասխանատու պետական կառույցների կայքերը, նաև՝ նախարարությունների եւ գերատեսչությունների բարձրաստիճան ներկայացուցիչների հետ հանդիպումներն ու զրույցները, պատասխանները նամակ-հարցումներին, որոնք ԽԱՊԿ-ն հղել է իշխանական կառույցներին՝ պաշտոնական տեղեկություններ ստանալու համար: Այդպիսի նամակներ են ուղարկվել, մասնավորապես, ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարություն, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն, Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողով եւ այլն:

Այս զեկույցը, որը պատրաստվել է մշտադիտարկման տվյալների հիման վրա, բաղկացած է երեք բաժնից, որոնք համապատասխանում են թվայնացման գործընթացի գլխավոր բաղադրիչներին.

- հեռարձակման ոլորտի օրենսդրական կարգավորում,
- վերգետնյա թվային հեռարձակման ցանցի կառուցում,
- թվայնացման հետ կապված սոցիալական հիմնախնդիրները եւ դրանց լուծման

հնարավորությունները:

Յուրաքանչյուր բաժնում ներկայացված են առաջարկություններ, որոնք նպատակաուղղված են երկրում անալոգայինից թվային հեռարձակմանն անցնելու գործընթացի բարելավմանը:

ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը իր ընդունման պահից՝ 2000թ. առ այսօր սուր քննադատության է ենթարկվում երկրի լրագրողական կազմակերպությունների, տեղական եւ արտասահմանյան փորձագետների, միջազգային հեղինակավոր կառույցների կողմից: Դրա գոյության 14 տարիների ընթացքում խորհրդարանն ընդունել է լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին ավելի քան 20 օրենք, բայց դրանք հիմնականում կրել են կոսմետիկ բնույթ կամ էլ լուծել են այսրոպեական խնդիրներ, որոնք բավարարել են այս կամ այն քաղաքական եւ/կամ ֆինանսական խմբավորումների շահերը:

Առավել նշանակալի փոփոխության, ինչպես հայտնի է, օրենքը ենթարկվեց 2010-ի հունիսին, ինչը պայմանավորված էր Հայաստանում անալոգայինից թվային հեռարձակմանն անցնելու գործընթացով: Դա, ըստ էության, նոր օրենք էր, որի առաջին հոդվածը ազդարարում է. «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ

օրենքը՝ ընդունված 2000թ. հոկտեմբերի 9-ին, շարադրել հետեւյալ խմբագրմամբ...»:
Եվ, որ գլխավորն է, փոփոխություններն ու լրացումները վերաբերում էին ոչ միայն
թվայնացման պայմաններին եւ հարաբերությունների կարգավորմանը, այլեւ
բազմաթիվ այլ դրույթների, որոնք ուղղակի որեւէ առնչություն չունեն թվայնացման
գործընթացին:

Նորացված օրենքը, սակայն, ոչ միայն չլուծեց հեռարձակման ոլորտի հին
հիմնախնդիրները, այլեւ պարունակում է նոր սպառնալիքներ: Տեղական անկախ
փորձագետները եւ միջազգային կառույցների ներկայացուցիչները դրանք
մատնանշել էին դեռեւս առաջարկվող փոփոխությունների քննարկման փուլում,
որոնք կառավարությունը օրինագծի տեսքով ներկայացրել էր ՀՀ Ազգային ժողովի
քննարկմանը: Մասնավորապէս, երկրի լրագրողական կազմակերպությունները
համատեղ ընդունած մի շարք հայտարարություններում արտահայտեցին իրենց
բացասական վերաբերմունքը փաստաթղթին եւ առաջարկեցին ծագած
հիմնախնդիրների հնարավոր լուծումները:

Այս ուղղությամբ ակտիվ աշխատանք կատարեցին նաեւ միջազգային
կազմակերպությունները՝ ԵԱՀԿ-ն, Եվրախորհուրդը, Եվրամիությունը եւ այլք:
Առանձնապէս կառուցողական քայլեր ձեռնարկեց ՁԼՄ-ների ազատության
հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակը, որի պատվերով միջազգային հայտնի
փորձագետներ՝ պրոֆեսորներ Քեթրին Նայման-Մետկալֆը եւ Անդրեյ Ռիխտերը,
պատրաստեցին վերլուծական մի շարք փաստաթղթեր, որոնք առնչվում էին
«Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման
հայեցակարգին» եւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում
առաջարկվող փոփոխություններին: Փորձագիտական եզրակացությունները
տրամադրվեցին երկրի իշխանություններին, տարածվեցին տեղի հասարակության
մեջ, քննարկվեցին ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի կազմակերպած սեմինարում,
տեղական փորձագետները հղումներ կատարեցին դրանց վրա խորհրդարանական
լսումների եւ հրապարակային այլ միջոցառումների ժամանակ, ինչպէս նաեւ
թվայնացման հիմնախնդիրներին առնչվող տարբեր զեկույցներում:

Իշխանությունները, սակայն, օրենքը փոփոխեցին այնպէս, ինչպէս
նախատեսում էին ի սկզբանէ եւ սկզբունքային հարցերում ոչ մի զիջման չգնացին: Այդ
իսկ պատճառով շատ դրույթներով այն չի համապատասխանում միջազգային
չափանիշներին:

Որո՞նք են «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի հիմնական
թերությունները: Նախ, այն ամբողջովին խոչընդոտում է հեռարձակման ոլորտի
ազատականացմանը, այստեղ նոր «խաղացողներին» ի հայտ գալուն, ազատ եւ արդար

մրցակցության ծավալմանը: Դրա հոդված 46-ը, մասնավորապես, սահմանում է «Լիցենզիան միակ օրինական հիմքն է, որը թույլ է տալիս Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնել հեռուստառադիոհաղորդման հեռարձակում»: Եթե նկատի ունենանք, որ լիցենզավորման մրցույթները, ըստ օրենքի, անցկացվում են 10 տարին մեկ անգամ, ապա այդ ընթացքում նոր հեռուստաընկերությունների հայտնվելը գործնականում բացառվում է, այսինքն՝ պահպանվում է ստատուս-քվոն: Մեջբերված դրույթը, ըստ էության, կարող է դառնալ արբանյակային, ինտերնետային, ինչպես նաև բջջային կապի միջոցով հեռարձակման արգելման հիմք: Ի դեպ, հեռարձակման այդ տեսակները օրենքում հստակ սահմանազատված չեն, եւ գրված չէ, թե ինչպես պիտի կարգավորվեն հարաբերություններն այստեղ:

Երկրորդ՝ օրենքը չի հստակեցնում մասնավոր մուլտիպլեքսների ստեղծման եւ արտոնագրման պայմանները եւ կարգը: Այստեղ բացակայում են նաև մասնավոր մուլտիպլեքսների բովանդակության վերաբերյալ դրույթները. մասնավորապես՝ պե՞տք է դրանք ներառեն անվճար սոցիալական փաթեթ («must carry»), թե՞ ոչ:

Երրորդ՝ որոշ հիմնական հասկացություններ, որոնք ամրագրված են հոդված 3-ում, ձեւակերպված են ոչ հստակ, առանձին դեպքերում էլ դրանց սահմանումը առհասարակ բացակայում է, թեև օրենքի առանձին դրույթներում գործածվում են: Ձեւակերպելով հիմնական հասկացությունները, օրենսդիրը մի շարք դեպքերում անտեսել է միջազգային փորձը եւ հեռարձակման ոլորտը կարգավորող միջազգային համաձայնագրերը: Այսպես. օրենքով սահմանված «վերահեռարձակում» հասկացությունը, որը կարելու էր էլ խաղում այս ոլորտում որոշակի տեսակի գործունեության կարգավորման մեջ, տարբերվում է «Անդրսահմանային հեռուստատեսության մասին» Եվրոպական կոնվենցիայում օգտագործվող համապատասխան հասկացությունից (հոդ. 2) եւ չի նպաստում եզրույթի իմաստային ընկալմանը: Կոնվենցիայի պարզաբանական զեկույցի 87-րդ կետի համապատասխան՝ վերահեռարձակումը բնութագրվում է երեք չափանիշներով. հաղորդվող ծրագրի համաժամանակյա հեռարձակում, ծրագրի ամբողջականություն, անփոփոխելիություն: Այս չափանիշներից որեւէ մեկի բացակայության դեպքում խոսքը կվերաբերի արդեն ոչ թե վերահեռարձակմանը, այլ նոր հեռարձակմանը (ծրագրի հեռարձակում, որը ստեղծել է մեկ այլ հեռուստա-կամ ռադիոընկերություն): Ընդ որում, «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի հոդված 3-ը սահմանում է. «վերահեռարձակում՝ այլ հեռուստառադիոընկերության հեռուստառադիոհաղորդման միաժամանակյա կամ արդեն հեռարձակված եւ

ամրագրված (ձայնագրված եւ (կամ) տեսագրված) հաղորդման հետագա հեռարձակում այլ լիցենզավորված անձի կողմից»:

Չորրորդ՝ ընդունված օրենքը նկատելիորեն մեծացրեց հեռուստառադիոընկերությունների հետագա առևտրայնացման սպառնալիքները՝ ի վնաս գործունեության հումանիտար ուղղվածության: Ավելին. 2011թ. մայիսի 26-ին ՀՀ Ազգային ժողովը ընդունեց փոփոխությունների եւ լրացումների փաթեթ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին», «Գովազդի մասին» ՀՀ օրենքներում, որի հետեւանքով վերացվեց, այսպես կոչված՝ թաքնված գովազդի արգելքը, ինչպես նաեւ ավելացվեց եթերային 1 ժամվա հաշվով առևտրային գովազդի թույլատրելի չափը. 10-ից այն հասցվեց 14 րոպեի: Ըստ էության, այս փոփոխություններով օրինականացվեց գովազդի՝ մինչ այդ սահմանված տեւողության գերազանցումը, որը վաղուց նկատվել էր եւ որի մասին բազմիցս հայտարարել էին հեռարձակող ՁԼՄ-ների մշտադիտարկում իրականացրած կազմակերպությունները: Իսկ 2014 թ. հուլիսի 21-ին խորհրդարանն այդ նույն օրենքներում կատարեց նոր փոփոխություններ եւ լրացումներ, համաձայն որոնց՝ մասնավոր հեռուստաընկերություններին թույլատրվում է ժամը 22.00- 06.00 ցուցադրել ակոհոլային խմիչքների գովազդներ: Նախկինում այդ տեսակի խմիչքների գովազդը, բացառությամբ հայկական կոնյակի, արգելված էր:

Հինգերորդ՝ օրենքով նախատեսված հեռարձակման լիցենզավորման համակարգը պահպանել է հին, իրեն սպառած մեխանիզմները եւ հաշվի չի առնում ժամանակակից տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը եւ մուլտիմեդիա հարթակների ստեղծման հնարավորությունները: Բացի այդ, գործող բարդ ընթացակարգը անցկացվող մրցույթներում, որոնք նախկինում էլ աչքի չէին ընկնում թափանցիկությամբ եւ արդարությամբ, այժմ կարող է դառնալ հեռարձակման ոլորտի զարգացման արգելակ:

Վեցերորդ՝ օրենքում չլուծված են մնացել Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի, ինչպես նաեւ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անկախ գործունեությունն ապահովելու հիմնախնդիրները: Մասնավորապես, վերանայման կարիք են զգում դրանց ձեւավորման պայմաններն ու կարգը, իսկ Խորհրդի մասով՝ նաեւ նրա անդամների աշխատանքի վարձատրման սկզբունքները:

Յոթերորդ՝ օրենքը չի պարունակում որեւէ պահանջ հեռուստա- եւ ռադիոընկերությունների սեփականության թափանցիկության ապահովման վերաբերյալ, ինչն անընդունելի է ժողովրդավարական սկզբունքներին հավատարմության տեսանկյունից:

Այս եւ հեռարձակման օրենսդրության հետ կապված մի շարք այլ հիմնախնդիրների լուծման համար Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն ստեղծեց աշխատանքային խումբ, որի մեջ ընդգրկվեցին ներկայացուցիչներ երկու գործընկեր կազմակերպություններից՝ Երեւանի մամուլի ակումբից եւ Մեդիա նախաձեռնությունների կենտրոնից (նախկին «Բնտերնյուս-Հայաստան»), նաեւ՝ այլ անկախ փորձագետներ: Այս երեք լրագրողական միավորումները, լինելով «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» գործող օրենքի ակտիվ քննադատներ, նաեւ նախկինում՝ համատեղ կամ առանձին, - մշակել են այն բարեփոխելու առաջարկություններ: Երկու ամսվա աշխատանքի արդյունքում այժմ նախապատրաստված է միասնական փաստաթուղթ՝ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագիծ, որը կոչված է արմատապես բարեփոխել իրավական հարաբերությունները եւ իրավիճակը հեռարձակման ոլորտում: Այն պարունակում է նաեւ մի շարք գաղափարներ, որ ծագել էին նախորդ տարիներին, նաեւ՝ մեր իրականության համար նոր մոտեցումներ եւ սկզբունքներ, որոնք ձեւավորվել են միջազգային փորձի հիման վրա: Այս փաստաթղթի հետ մեկտեղ պատրաստվել են նաեւ փոխկապակցված առաջարկություններ, որոնք նախատեսում են փոփոխություններ «Լիցենզավորման մասին» եւ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում:

Բոլոր երեք օրինագծերը կցված են սույն զեկույցին: Այդ պատճառով այստեղ մենք ներկայացրել ենք միայն ընդհանուր սկզբունքային մոտեցումներ վերը նշված գլխավոր հիմնախնդիրների լուծման համար, առաջարկվող փոփոխությունների իմաստն ու առանձնահատկությունները:

Նոր օրինագծի առանցքային գաղափարը հեռուստա- եւ ռադիոընկերությունների լիցենզավորման պարզեցված ընթացակարգին անցնելն է: Այդ գաղափարը կոչված է արմատապես փոխել հարաբերությունները հեռարձակման ոլորտում, արդիականացնել դրանք, նպաստել ազատ եւ արդար մրցակցության զարգացմանը: Արտոնագրման՝ այժմ գործող բարդ համակարգը, բացի այն, որ սուբյեկտիվ որոշումներ ընդունելու մեծ հնարավորություններ է տալիս, չի նպաստում հեռարձակման նոր տեխնոլոգիաների լայն կիրառմանը: Ըստ էության, ցանկացած տեսակի հեռարձակման (արբանյակային, ինտերնետային, բջջային կապի եւ այլ) իրականացման հնարավորությունը կախված է թվային ցանցում եթերային հեռարձակման լիցենզիայի առկայությունից կամ բացակայությունից:

Ի տարբերություն դրա, նոր օրինագծի համաձայն՝ լիցենզիա ստանալու հայտով կարող են դիմել իրավաբանական անձինք (եւ ոչ միայն արդեն գոյություն ունեցող

հեռուստառադիոընկերությունները), որոնք իրենց մասին ընդհանուր տեղեկություններից բացի (անվանում, գտնվելու վայր, թեմատիկ ուղղվածություն եւ այլն), պետք է կարգավորող մարմնին ներկայացնեն իրավաբանական անձի կարգավիճակը հաստատող փաստաթղթերի պատճենները, նաեւ՝ պետտուրքի վճարման անդորրագիրը: Ներկայացված փաստաթղթերի՝ օրենքի պահանջներին համապատասխանելու դեպքում Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը 23-օրյա ժամկետում տրամադրում է լիցենզիա: Դրանից հետո իրավաբանական անձը ինքն է որոշում՝ հեռարձակման որ համակարգում ընդգրկվել: Նա կարող է մասնակցել ՀՌԱՀ մրցույթներին՝ իրավունք ձեռք բերելու իր ծրագրերը հեռարձակել «սոցիալական փաթեթով» («must carry»)՝ Եթերային հեռարձակման հանրային թվային ցանցով (պետական մուլտիպլեքսներով), կամ կարող է պայմանագիր կնքել մասնավոր մուլտիպլեքսի օպերատորի հետ, կամ հեռուստածրագրերը հեռարձակել կաբելային, արբանյակային, բջջային կապի միջոցներով:

Ընդհանուր առմամբ, լիցենզավորման կարգի պարզեցմանն անցնելու գաղափարը հիմնավորելու համար հարկ ենք համարում նշել հետեւյալը: Առաջին՝ արտոնագրման բարդ ընթացակարգը նախկինում անհրաժեշտ էր, քանի որ հեռուստառադիոընկերությունները բացառապես օգտագործում էին սահմանափակ հանրային ռեսուրս՝ ռադիոհաճախականություններ անալոգային հեռարձակման համար: Իսկ նոր տեխնոլոգիաները նշանակալիորեն ընդլայնում են հնարավորությունները, այդ թվում թույլ են տալիս իրականացնել հեռարձակում նաեւ առանց հանրային սահմանափակ ռեսուրսի օգտագործման: Երկրորդ՝ լիցենզավորման պարզեցված գործընթացը հեռուստաընկերություններին թույլ է տալիս, ստանալով արտոնագիրը, ինքնուրույն ընտրել իր ծրագրերի հեռարձակման տեսակը (միջոցը) եւ իրականացնել հեռարձակումը՝ պայմանագիր կնքելով այն իրավաբանական անձանց հետ, որոնց ենթակայության ներքո է գտնվում այս կամ այն հեռարձակման ցանցը: Երրորդ՝ լիցենզավորման պարզեցված կարգը, որը գրեթե հնարավորություն չի թողնում լիցենզիայի տրամադրումը մերժելու, նպաստում է հեռարձակման ոլորտում իրավական հարաբերությունների ազատականացմանը եւ խթանում է հեռարձակման ժամանակակից տեխնոլոգիաների առավել ակտիվ օգտագործմանը: Եւ, վերջապես, չորրորդ՝ լիցենզավորման պարզեցված կարգին անցնելու գաղափարը ենթադրում է, որ հեռուստառադիոընկերությունների միջեւ մրցույթները պետք է անցկացվեն միայն Եթերային հեռարձակման հանրային թվային ցանցով սեփական ծրագրերի հեռարձակման իրավունք ստանալու համար: Այդ մրցույթներին կարող են մասնակցել բոլոր լիցենզավորված

հեռուստառադիոընկերությունները: Այս մոտեցման իմաստն այն է, որ լիցենզավորված հեռուստաընկերությունների՝ գոյություն ունեցող ցանկից պետությունը մրցութային կարգով ընտրի այն «սոցիալական փաթեթը», որը անվճար հասանելի կլինի երկրի ամբողջ բնակչությանը: (Այլ եղանակներով հեռարձակվող հեռուստառադիոհաղորդումների տրամադրումը, բնականաբար, նախատեսում է վարձ, որը ոչ բոլորն են ի վիճակի կամ ցանկանում վճարել): Սրա հետ մեկտեղ, լիցենզավորված հեռուստառադիոընկերությունների համար, որոնք չեն ներգրավվի «սոցիալական փաթեթի» մեջ, կպահպանվի այլ եղանակներով հեռարձակվելու հնարավորությունը՝ կաբելային, արբանյակային, բջջային կապով, համացանցով եւ այլն:

Օրինագծում որոշակիացված է մասնավոր մուլտիպլեքսների լիցենզավորման կարգը, ինչը չկա «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» գործող օրենքում: Գործող օրենքը հոդված 47-ում նախատեսում է թվային հեռարձակման ցանցի ձեւավորում եւ գործարկում: Այդ ցանցը պետք է միավորի պետության կողմից ստեղծված 4 մուլտիպլեքս՝ 18 համազգային եւ մայրաքաղաքային հեռուստաընկերությունների, ինչպես նաեւ երկրի յուրաքանչյուր մարզից մեկական տեղական հեռուստաընկերության ծրագրերը հեռարձակելու համար:

Քացառված չէ, որ օրենքի հեղինակները ենթադրել են, որ նաեւ մասնավոր մուլտիպլեքսներ պիտի ներառվեն նույն ցանցում, ինչը Հայաստանի պայմաններում կարող է սահմանափակել դրանց գործունեության ազատությունը: Նոր օրինագծում այդ հիմնախնդիրը լուծվում է հետեւյալ կերպ: Քանի որ հիշատակված 18 հեռուստաընկերությունների ծրագրերը իրենցից ներկայացնում են, այսպես կոչված, «սոցիալական փաթեթ» («must carry») եւ դրանց անվճար տրամադրումը բնակչությանը հասարակական նշանակալի գործառույթ է, ցանցը, որը միավորում է 4 պետական մուլտիպլեքս, կոչվում է «Եթերային հեռարձակման հանրային թվային ցանց»: Ընդ որում, հնարավորություն է ստեղծվում սահմանազատել այն մասնավոր մուլտիպլեքսներից: Վերջիններիս համար նախատեսված է նոր հոդված՝ 55.1, որտեղ նշված է դրանց ձեւավորման եւ գործունեության կարգը: Իսկ անցումային դրույթներում նշվում է, որ մասնավոր մուլտիպլեքսները հեռարձակման տիրույթում կարող են ի հայտ գալ 2015 թ. հուլիսի 1-ից հետո: Դրանց լիցենզավորումը իրականացնում է Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովը նույն պարզեցված ընթացակարգով, ինչ որ մասնավոր հեռուստառադիոընկերությունների պարագայում:

Համաձայն օրինագծի՝ մասնավոր մուլտիպլեքսների բովանդակության (հեռուստածրագրերի փաթեթի) կազմումը թողնված է նրանց օպերատորների

հայեցողությանը: Աշխատանքային խմբի կարծիքով, եթե նրանց օրենսդրորեն պարտադրվի իրենց մուլտիպլեքսների մեջ ներառել «սոցիալական փաթեթի» հեռուստածրագրերը, դա անհիմն կերպով կսահմանափակի հեռարձակման ոլորտում մասնավոր բիզնեսի ազատությունը եւ զարգացման հնարավորությունները: Այդ պատճառով մասնավոր մուլտիպլեքսների օպերատորներին ներկայացվում են միայն այնպիսի պահանջներ, որոնք վերաբերում են բազմակարծության եւ բազմազանության ապահովման անհրաժեշտությանը, հեռուստածրագրերի արդարացի եւ հիմնավորված ընտրությանը, ՁԼՄ-ների անկախության եւ ազատության սկզբունքների պահպանմանը: Դրա հետ մեկտեղ «must carry»-ն կդառնա կաբելային հեռարձակող ընկերությունների փաթեթների պարտադիր բաղկացուցիչ մասը, որոնց տեխնիկական հնարավորությունները նկատելիորեն ավելի լայն են, քան վերգետնյա հեռարձակում իրականացնող մուլտիպլեքսներին:

Թվայնացումից հետո, ինչպես նախատեսված է օրինագծում, մուլտիպլեքս օպերատորի եւ հեռարձակող ցանցի օպերատորի, եթե դրանք տարբեր իրավաբանական անձինք են (կա նաեւ հնարավորություն, որ նրանք ներկայացնեն մեկ ամբողջություն), հարաբերությունները պետք է կառուցվեն պայմանագրային հիմունքներով:

Կարելի է նաեւ, որ փորձագետների խումբը օրինագծի վրա աշխատելու ընթացքում առաջարկել է հեռարձակման ոլորտի մի շարք այլ լուրջ հիմնախնդիրների լուծման տարբերակներ, հիմնախնդիրներ, որ գոյություն ունեին թվային հեռարձակմանն անցնելու գործընթացը սկսելուց շատ ավելի վաղ: Դա, նախ եւ առաջ, վերաբերում է կարգավորող մարմնի՝ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի (ՀՌԱՀ), ինչպես նաեւ Հանրային հեռուստատառադիոընկերության խորհրդի ձեւավորման կարգին: Ինչպես հայտնի է, գործող օրենքով թափուր տեղեր առաջանալու դեպքում Հանրային հեռուստատառադիոընկերության խորհրդի անդամները նշանակվում են երկրի նախագահի կողմից՝ հայտարարված մրցույթի արդյունքների հիման վրա, ընդ որում այստեղ հաղթողները կարող են լինել մի քանիսը, բայց նախապատվությունը տրվում է մեկին՝ երկրի ղեկավարի հայեցողությամբ: Ինչ վերաբերում է ՀՌԱՀ անդամներին, ապա նրանց կեսը մրցութային հիմունքներով ընտրվում են Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսին նշանակում է ՀՀ նախագահը: Բայց բոլոր դեպքերում այդ մարմիններում հայտնվում են մարդիկ, որոնք նվիրված են գործող իշխանություններին եւ պատրաստ են կատարել նրանց քաղաքական պատվերը:

Այդ կապակցությամբ օրինագծում առաջարկվում է ՀՌԱՀ անդամների ընտրության կամ նշանակման ժամանակ նախատեսել հանրային լսումների

անցկացում, որոնք, ինչպես ենթադրվում է, թույլ կտան կարգավորող մարմնի թափուր տեղերի համալրման գործընթացը դարձնել ավելի թափանցիկ եւ կնպաստեն թե՛ թեկնածուների, թե՛ նրանց բարձր պաշտոնի նշանակողների պատասխանատվության բարձրացմանը: Նախատեսվում է կազմել այդ լուսմների արձանագրությունները, եւ հենց դրանց հիման վրա պիտի ընդունվի ՀՌԱՀ յուրաքանչյուր անդամի նշանակման (կամ ընտրության) վերաբերյալ վերջնական որոշումը:

Հանրային լուսմները նախատեսվում են նաեւ Հանրային հեռուստատառադիորնկերության խորհրդի անդամների նշանակման ժամանակ: Բայց այստեղ առաջարկվում է առավել արմատական փոփոխություն այդ կառույցի ձեւավորման կարգում: Մասնավորապես, ի տարբերություն ներկա պայմանների, երբ Խորհրդի անդամները նշանակվում են թեկուզ եւ մրցութային հիմունքով, այսուհանդերձ դա մնում է բացառապես երկրի նախագահի լիազորությունը, օրինագծում նախատեսվում է ավելացնել այդ կառույցի թվակազմը. 5-ի փոխարեն՝ 7 հոգի, եւ մեկական թեկնածու առաջադրելու իրավունք վերապահել:

1. Ազգային ժողովում ամենամեծ խմբակցություն ունեցող իշխանական կուսակցությանը կամ դաշինքին,
2. Ազգային ժողովում ամենամեծ ընդդիմադիր խմբակցություն ունեցող կուսակցությանը կամ դաշինքին,
3. ԶԼՄ-ների եւ լրագրության ոլորտում առնվազն 10 տարի գործունեություն ծավալած եւ ԶԼՄ-ներին վերաբերող առնվազն 20 ծրագիր իրականացրած հասարակական միավորումներին (համատեղ՝ մեկ թեկնածու),
4. Գրողների, նկարիչների, կոմպոզիտորների, թատերական գործիչների, կինոգործիչների, ճարտարապետների միություններին (համատեղ՝ մեկ թեկնածու),
5. Մարդու իրավունքների պաշտպանին,
6. Գիտությունների ազգային ակադեմիային,
7. Արհմիությունների կոնֆեդերացիային:

Թեկնածությունները քննարկվում են հասարակական լուսմներում, որոնք կազմակերպում է գործող Խորհուրդը, եւ հաշվի առնելով արտահայտված կարծիքները, որոնք տեղ են գտնում միջոցառման արձանագրության մեջ, երկրի նախագահը որոշում է կայացնում նշանակել կամ մերժել: Թեկնածության մերժման դեպքում նույն կազմակերպությունները առաջադրում են նոր թեկնածու:

Հնարավոր է, նույնչափ արմատապես կարող էր փոխված լինել նաեւ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի ձեւավորման կարգը:

Բայց դա լրջորեն դժվարանում է նրանով, որ ՀՀ սահմանադրության 83.2 հոդվածում ամրագրված է «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում սահմանված դրույթն առ այն, որ ՀՌԱՀ անդամների կեսին նշանակում է նախագահը, իսկ մյուս կեսին ընտրում է խորհրդարանը: Հետեւապես, կարգավորող մարմնի ձեւավորման կարգի փոփոխության համար անհրաժեշտ է փոփոխություն մտցնել Սահմանադրության մեջ, որը բավականին բարդ գործընթաց է՝ ենթադրում է անցկացնել հանրաքվե:

Մեր կարծիքով, օրինագծում չափազանց կարելուք դրույթ է պահանջը, որ ՀՌԱՀ-ը մրցույթներ անցկացնելիս (գործող օրենքում՝ հեռարձակման լիցենզիա, նախագծում՝ Եթերային հեռարձակման հանրային թվային ցանցով հեռարձակվելու իրավունք տրամադրելու համար) հիմնավորի ոչ միայն հաղթողի, այլեւ պարտվողի՝ իր ընտրությունը: Այս նորմը օրենքում ընդգրկելու անհրաժեշտությունը ծագում է, նախ եւ առաջ, «Ա1+» հեռուստաընկերության հիմնադիր «Մելտեքս» ՍՊԸ-ի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2008 թ. հունիսի 17-ի վճռից, որտեղ պահանջ կա Ազգային հանձնաժողովի կողմից արտոնագիր տրամադրելու գործընթացում թափանցիկություն ապահովելու վերաբերյալ, ինչպես նաեւ համապատասխան հիմնավորումներ բերել արտոնագրի տրամադրումը մերժելիս: Հետեւաբար, նման դրույթի բացակայությունը հակասում է Եվրադատարանի որոշմանը: Բացի այդ, դեռեւս 2010թ. օրենքի մեջ այս պահանջի ներառման անհրաժեշտությունը ընդգծեցին նաեւ միջազգային փորձագետները, որոնք ԶԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի պատվերով պատրաստում էին Հայաստանում թվայնացման վերաբերյալ եզրակացություններ եւ առաջարկություններ: Բայց այն ժամանակ այդ առաջարկությունը հաշվի չառնվեց:

Ի տարբերություն գործող օրենքի, մշակված օրինագծում առաջարկվում է հեռուստառադիոընկերությունների սեփականության թափանցիկության ապահովման հետ կապված հարցերի լուծում: Մասնավորապես, նախատեսվում է արգելք սահմանել այն բանի վրա, որ մասնավոր հեռուստառադիոընկերությունների հիմնադիր դառնան օֆշորային գոտիներում գրանցված իրավաբանական անձինք: Բացի այդ, համաձայն օրինագծի, հեռուստառադիոընկերություններն իրենց կայքերում պարտավոր են հրապարակել իրենց հիմնադիր իրավաբանական անձանց բաժնետեր եւ արժեթղթերի 5 տոկոսից ավելին տիրապետող ֆիզիկական անձանց անուն ազգանունները, պաշտոնը (հիմնական աշխատանքը) եւ բաժնեմասը: Սեփականության բաշխվածության փոփոխության դեպքում տեղեկությունները պետք է թարմացվեն մեկ ամսվա ընթացքում:

Օրինագծով առաջարկվող այլ նշանակալի փոփոխություններից է Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի, ինչպես նաեւ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամների համար երդումի վերացումը: Աշխատանքային խմբի փորձագետների տեսանկյունից այդ արարողությունը դրական ոչինչ չի տալիս երկու կառույցների գործունեության պրակտիկայում, որը շատ հաճաղ ուղղակի հակասում է երդման բովանդակությանը: Առաջարկվում է նաեւ գործող օրենքի հոդված 27-ից հանել պահանջը, որ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կազմում պետք է լինի առնվազն մեկ կին: Նման մոտեցումը օրինագծի հեղինակները համարել են ոչ տեղին, քանի որ կնոջ լիազորությունների ժամկետի ավարտին կարող է ստեղծվել արսուրդ իրավիճակ, երբ հերթական մրցույթին մասնակցելու իրավունք կունենան միայն գեղեցիկ սեռի ներկայացուցիչները: Դրա փոխարեն ՀՌԱՀ եւ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ ձեւավորելիս առաջարկվում է ընդհանուր առմամբ հաշվի առնել գենդերային ներկայացուցչության սկզբունքը:

Մշակված օրինագիծը նախատեսվում է ուղարկել ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողով եւ համապատասխան քննարկումներից հետո, այդ թվում՝ հեռարձակման ոլորտի համար պատասխանատու պետական տարբեր կառույցների ներկայացուցիչների հետ, - ներկայացնել այն խորհրդարանի քննարկմանը:

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն գործընկեր կազմակերպությունների՝ Երեւանի մամուլի ակումբի եւ Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի (նախկին «Ինտերնյուս») հետ ՀՀ ԱԺ-ին առաջարկելու է հերթական նստաշրջանում ընդունել մշակված օրինագիծը:

ՎԵՐԳԵՏՆՅԱ ԹՎԱՅԻՆ ՀԵՌԱՐՉԱԿՄԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանում թվային հեռարձակման ծրագրի ներդրման գործընթացը, առանձնահատկություններն ու իրականացման ժամանակացույցը հիմնականում պայմանավորված են բնագավառի գործառույթները կարգավորող միջազգային կառույցի՝ Հեռահաղորդակցության միջազգային միության (International Telecommunication Union) ընդունած որոշումներով եւ ՀՀ տարածքում գործող՝ այդ բնագավառին վերաբերող օրենսդրական եւ ենթօրենսդրական ակտերով: Այս տեսակետից ներկայիս իրավիճակը մասամբ համապատասխանում է վերոհիշյալ փաստաթղթերի պահանջներին:

Հիմնական անհամապատասխանությունները կապված են իրականացման ժամանակացույցի հետ: Այսպես, ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 27-ի N193Ն որոշումով հաստատված «ՀՀ տարածքում վերգետնյա թվային հեռարձակման համակարգի ներդրման գործընթացի իրականացման ծրագրի կատարման միջոցառումների ժամանակացույցում» որևէ անդրադարձ չկա թվային եւ անալոգային ֆորմատներով զուգահեռ հեռարձակման մասին: Մինչդեռ, համաձայն ՀՀ կառավարության 2009թ. նոյեմբերի 12-ի N47 արձանագրային որոշումով ընդունված «Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգի» դրույթների՝ արդեն իսկ 2013թ. Հայաստանի ամբողջ տարածքում պետք է իրականացվեր հեռուստածրագրերի թվային եւ անալոգային զուգահեռ հեռարձակում (switch-over): Գործառույթի կարելոթությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ հեռուստածրագրերի թվային եւ անալոգային զուգահեռ հեռարձակման ժամանակահատվածում իրականացվում է տեսաձայնային ազդանշանի հասանելիության մանրակրկիտ մշտադիտարկում երկրի ողջ տարածքում, փորձարկվում եւ կարգաբերվում է բնակֆոնդի ներկայիս ընդունիչ անտենամալուխային համակարգը, ինչպես նաեւ բնակչության ապահովվածությունը ապակողավորման թվային կցուրդներով:

Տպավորություն է ստեղծվում, որ լիովին մոռացության է մատնված Հայաստան այցելած փորձագետների այն մտահոգությունը, որ տարիների ընթացքում խափանված տեղային ընդունիչ անտենամալուխային համակարգերը լուրջ բարդություններ են առաջացնելու հետագայում՝ վերգետնյա եթերային թվային հեռուստաազդանշանի հստակ ընդունման համար: Հանրապետության ողջ տարածքում լուրջ ձեւափոխման եւ կարգաբերման անհրաժեշտություն ունեն բնակչության ընդունիչ անտենամալուխային համակարգերը: Ներկայումս լիովին ապամոնտաժված են կոլեկտիվ ընդունիչ ցանցերը: Անալոգային հեռարձակման ազդանշանի ընդունման համար տեղադրված են ամենաբազմազան կառուցվածքների եւ հայտնի ու անհայտ արտադրության ընդունիչ անտենաներ: Ընդունիչ անտենամալուխային համակարգերի կառուցման եւ կարգաբերման խնդրի մասշտաբայնությունը եւ լուծման բարդությունը պայմանավորված են մի շարք գործոններով, որոնցից են, մասնավորապես՝

1. կառուցվելիք ընդունիչ ցանցերի մեծ թիվը՝ մոտ 1 միլիոն շահառուներ հանրապետության ողջ տարածքում,
2. ընդունիչ անտենայի ընտրության կախվածությունը, մասնավորապես, հեռարձակող կայանի հեռավորությունից, տվյալ բնակավայրում հեռարձակվող ազդանշանի հաճախականային տիրույթից, թվային հաղորդակի ելքային հզորությունից եւ աշխարհագրական դիրքից, մեկից ավելի հեռարձակման կայաններից ծրագրերի ընդունման դեպքում՝ հեռարձակման ուղղվածությունից եւ այլն:

Բացի այդ, միջազգային շուկայում առաջարկվող ընդունիչ անտենամալուխային համակարգերի ցանկը բավականին ընդգրկուն է՝ ըստ տեխնիկական բնութագրերի, գնի (20-150 ԱՄՆ դոլար) եւ տեղադրման նշանակության (արտաքին, ներքին, շարժական եւ այլն): Բնականաբար, բնակչությանը խորհրդատվություն մատուցելու նպատակով, մասնագիտական կառույցի կողմից պետք է իրականացվի լավագույն (անհրաժեշտ եւ բավարար տեխնիկական բնութագրերով եւ նվազագույն գնով) մի քանի տարբերակների ընտրության առաջարկ: Ընդունելով հարցի բարդությունը, այնուամենայնիվ անհրաժեշտ ենք համարում դրա լուծման հայեցակարգային մոտեցման մշակումը:

Հեռարձակման switch-over ռեժիմի ամբողջ ընթացքում պետք է իրականացվեին նաեւ բնակչության՝ թվային հեռարձակումից օգտվելու առումով իմացության եւ տեղեկացվածության բարձրացման միջոցառումներ՝ զանգվածային լրատվության միջոցների լայն ընդգրկմամբ, ինչպես նաեւ սպասարկման կենտրոնների ձեւավորման աշխատանքներ: Նշեցինք, որ այս աշխատանքները անտեսված են հաստատված ժամանակացույցում:

Փոխարենը նկատվում է թվայնացման միջոցառումների նախանշման ու իրականացման հապճեպություն՝ պայմանավորված ժամանակի սղությանը. չէ՞ որ 2015 թվականի հուլիսի 1-ին գործընթացը պիտի ավարտվի: Դա, իհարկե, արդյունքն է այն բանի, որ մինչեւ 2011 թվականը թվայնացման ծրագիրը մի տեսակ «գլխացավանք» էր դարձել տարբեր գերատեսչությունների եւ ՀՀ կառավարության համար: Մասնավորապես՝ 2006 թվականից մինչեւ 2011 թվականը կառավարության որոշումներով երկու անգամ փոփոխվեց ծրագրի իրականացման համար պատասխանատու գերատեսչությունը. դա մեկ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությունն էր, մեկ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, հետո կրկին ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությունը: Նմանատիպ փոփոխությունների հետեւանքով անպայմանորեն տուժում էր ծրագրի իրականացման հետեւողականությունը, փոշիացվում էին մասնագիտական կադրերի՝ առանց այդ էլ նվազ ուժերը եւ, որ ամենակարեւորն է, ավելի քիչ ժամանակ էր մնում ծրագրի իրականացման համար: Ցավոք, այդ ընթացքում թվային ցանցի կառուցման քայլերը մշակվում եւ ընդունվում էին բիզնեսի ներկայացուցիչների եւ կառավարության դոմինանտ քանակությունների արդյունքում, առանց հանրային քննարկումների եւ հասարակության մասնակցության:

Դեռեւս 2010թ. Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն համանման զեկույցում նշել էր Հայաստանում կառուցվելիք վերգետնյա թվային հեռուստառադիոհեռարձակման ցանցի համար նախընտրելի որոշ առանձնահատկությունների մասին, ինչպեսիք են սեղմման ստանդարտի ընտրության, միահաճախականային, թե բազմահաճախականային ցանցի կառուցման հարցերը եւ այլն:

Ներկա փուլում արդեն իսկ հայտնի է, որ շվեդական «Էրիքսոն» ընկերությունը հաղթող է ճանաչվել 2013թ. ամռանը հայտարարված ՀՀ վերգետնյա թվային հեռարձակման ցանցի կառուցման միջազգային մրցույթում, եւ որ ցանցի կառուցման աշխատանքները ընթանում են այդ ընկերության եւ «Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ միջեւ կնքված պայմանագրին համապատասխան: Չնայած դրան, ի պատասխան ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությանը հասցեագրված մեր գրությանը, փոխնախարար Ա. Առաքելյանի ստորագրությամբ մեզ ուղարկված պատասխում նշվում է, որ ցանցի կառուցման «միջոցառումների իրականացումը «Էրիքսոն» ընկերության հետ առնչություն չունի, դրանք իրականացվում են «Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության կողմից»: Մինչդեռ, ՀՀՌՅ ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Գրիգոր Ամալյանը 2014թ. օգոստոսի 15-ին ԽՄՊԿ ներկայացուցչին տված հարցազրույցում նկարագրեց, թե ինչպես են բաժանվել թվային ցանցի կառուցման համար նախատեսված գործառույթները շվեդական եւ հայկական ընկերությունների միջեւ: Այս առումով փոխնախարարը տարօրինակ անտեղյակություն է ցուցաբերում:

Ստորեւ ներկայացնենք կառուցվող վերգետնյա թվային ցանցի որոշ տեխնիկական բնութագրերի մասին մեր դիտարկումները: Այդ ցանցը նախագծված է DVB-T2 ստանդարտով, իսկ որպես ազդանշանի սեղմման ստանդարտ օգտագործված է MPEG-4-ը, որը հնարավորություն է ընձեռում հեռուստապատկերը փոխանցել IP ցանցերով եւ հանդիսանում է առավել արդյունավետ համակարգ: MPEG-4 ստանդարտը օգտագործվում է եթերային հեռարձակման եւ տեսահեռախոսակապի ժամանակ եւ իր մեջ ընդգրկում է MPEG-2 եւ նմանատիպ ստանդարտների բազմաթիվ ֆունկցիաներ՝ ավելացնելով բարձր ճշգրտության ցուցադրման հնարավորությունները:

DVB-T2 ստանդարտով վերգետնյա հաղորդիչ ցանցի կիրառումը թույլ է տալիս միաժամանակ իրականացնել տարբեր որակի հեռուստաձրագրերի տարածում (HDTV, SDTV, LDTV հստակության հեռուստատեսություն): Թվային DVB-T2 համակարգին բնորոշ է տվյալների փոխանցման արագության կարգավորելիությունը, որով պայմանավորվում է մեկ հեռուստաալիքով հեռարձակվող տարբեր հեռուստաձրագրերի քանակը եւ տեսաձայնային որակը, անդրադարձած էլեկտրամագնիսական ալիքներից պաշտպանվածության չափի կարգավորելիությունը, մոդուլյացիոն սխեմաների այլընտրանքի առկայությունը, տեղեկատվության փոխանակման սխալից ապահովվածությունը եւ այլն:

Ընդհանուր առմամբ, հեռարձակման թվային համակարգին անցումն ապահովում է սպառողների տեղեկատվական հատուկ կարիքները՝ առաջարկելով լրացուցիչ ծառայություններ. հեռուստահաղորդումների էլեկտրոնային տեղեկատու (EPG), տելետեքստ, հաղորդումների լեզվի այլընտրանքային տարբերակներ եւ այլն: Կաշկանդված չլինելով հեռուստատեսային գունային համակարգերի եւ ստանդարտների (PAL, SECAM,

NTSC) միջև տրանսկոդավորման անհրաժեշտությամբ՝ DVB-T2 ստանդարտով թվային հեռարձակումն էականորեն հեշտացնում է հեռուստառադիոձրագրերի ներքին եւ միջազգային փոխանակման խնդիրը, ինչն այնքան կարեւոր է գլոբալիզացիայի ժամանակաշրջանում:

Նախագծված թվային ցանցը հանդիսանում է բազմահաճախականային: Հայտնի է, որ ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվայնացումը նպաստում է հաճախականության տիրույթի օգտագործման արդյունավետության բարձրացմանը. բազմապատկվում է հեռարձակվող ռադիոհեռուստատեսային ծրագրերի քանակը: Հայաստանի տարածքը Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից բաժանված է 9 հեռարձակման գոտիների: Ակնհայտ է, որ մեր երկրի պարագայում, երբ համաձայն Ժնևի GE(06) թվային հեռուստատեսության պլանի, հատկացված են բավականին փոքր թվով կապուղիներ (43), նախընտրելի կլինեն միահաճախականային ցանցային մոդելը: Այն էապես կխնայեր հատկացված հաճախականային ռեսուրսը՝ հատկապես հեռարձակման 277 –րդ գոտու (թվով 11 կապուղի), որն իր մեջ ներառում է Արարատյան դաշտը՝ մայրաքաղաք Երևանով: Սակայն միահաճախականային ցանցային մոդելի իրականացումը կապված է լուրջ ֆինանսական ծախսերի հետ եւ ներկայումս անհամեմատ բարդ է տեխնիկական իրականացման տեսակետից՝ կապված տվյալ հեռարձակման գոտում հեռարձակող հաղորդակների սինխրոնիզացիայի բարձր մակարդակ (1 հց) ապահովելու անհրաժեշտության հետ, որն իրականացվում է GPS համակարգի միջոցով:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ կառուցվելիք թվային ցանցը պետք է ունենա հետագայում միահաճախականային (SFN) հեռարձակման ցանցի վերափոխման հնարավորություն՝ ըստ անհրաժեշտության: Վերոգրյալը հատկապես կարեւորվում է նշված 277-րդ գոտու համար, որը ամենագրավիչն է նաեւ մասնավոր ձեռնարկատիրության տեսակետից: Ինչ վերաբերվում է հեռարձակման մնացած գոտիներին, ապա ելնելով Հայաստանի ռելիեֆային առանձնահատկություններից, թվային հեռուստահեռարձակման համար հատկացված հաճախականությունները կարող են վերակիրառվել հեռարձակման տարբեր գոտիներում մի քանի անգամ, ինչը ընձեռում է առավել լայն հնարավորություններ հաճախականատարածքային պլանավորման համար:

ՀՀ տարածքում թվային հեռարձակում կարելի է իրականացնել 241 կապուղիներով: Հիմնական հաղորդակցության ուղիներից կտրված հեռավոր բնակավայրերում Հանրային հեռուստաընկերության հեռուստածրագրերն ընդունվում են արբանյակից: Հայաստանում կառուցվող վերգետնյա հեռարձակման թվային ցանցը ունենալու է մոտավորապես 200 կայան:

Կազմակերպվում է հանրային 4 մուլտիպլեքս՝ հեռարձակման եվրոպական DVB-T2 ստանդարտի կիրառմամբ: Առաջին մուլտիպլեքսը հեռարձակվում է Հայաստանի ողջ

տարածքում, իսկ երկրորդ, երրորդ եւ չորրորդ մուտիպլեքսները՝ միայն Երեւանում եւ դրա մերձակայքում: Հանրապետական մուտիպլեքսը (1-ին մուտիպլեքս) բաղկացած է 9 հեռուստա- եւ 4 ռադիոձրագրերից, իսկ երեւանյան մուտիպլեքսներից (2-րդ, 3-րդ եւ 4-րդ մուտիպլեքսներ) յուրաքանչյուրը՝ 6 հեռուստա- եւ 4 ռադիոձրագրերից:

Մարզային հեռուստաձրագրի ընդգրկումը հանրապետական մուտիպլեքսում իրականացվում է տեղում՝ մարզկենտրոնում կամ մարզի գլխավոր կայանում: Այդ նպատակով նախատեսված է ՀՀ մարզերից յուրաքանչյուրում կառուցել ապամուտիպլեքսավորման կայան՝ մարզային հեռուստաձրագրերի ընդգրկման համար:

Կառուցվում է արբանյակային հեռարձակման կայան Երեւանում՝ հանրապետական մուտիպլեքսի հեռահաղորդման համար: Երեւանի գլխամասային կայանում այդ մուտիպլեքսի ձեւավորումից հետո այն հեռահաղորդվում է Հայաստանի մարզեր: Մարզկենտրոնում կամ մարզի գլխավոր կայանում իրականացվում է ապամուտիպլեքսավորում եւ մարզային մեկ հեռուստաձրագրի ընդգրկում մուտիպլեքսի կազմում՝ տվյալ մարզի տարածքում այն հեռարձակելու նպատակով:

Ձուգահեռաբար, ձեւավորված հանրապետական մուտիպլեքսը Երեւանի արբանյակային հաղորդիչ կայանի միջոցով բարձրացվում է համապատասխան կապի արբանյակի վրա: Հայաստանի այն տարածքներում, որոնք անհասանելի են միկրոալիքային ռադիոգծերի համար, կառուցված մոտ 150 ընդունիչ արբանյակային կայանների միջոցով իրականացվելու է հանրապետական մուտիպլեքսի ընդունումը՝ կապի արբանյակից եւ հետագա եթերային հեռարձակումը տվյալ տարածքում: Սակայն նշված տարածքներում հեռարձակվող հանրային մուտիպլեքսի կազմում կբացակայի տվյալ մարզի մարզային հեռուստաձրագրերը:

Սա մի նոր խնդիր է, որը արտացոլված չէ «Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգում», որեւէ կերպ չի կարգավորվում գործող «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքով եւ երբեւէ չի բարձրաձայնվել իշխանությունների կողմից: Մինչդեռ, համաձայն ՀՀ Պետական վիճակագրական ծառայության տվյալների, վերոհիշյալ բնակավայրերի բնակիչների ընդհանուր թիվը կազմում է ՀՀ բնակչության մոտավորապես 5 տոկոսը: Նշված տարածքներում մարզային հեռուստաձրագրերի սփումը հնարավոր կլինի իրականացնել 2015 թվականից հետո միայն, երբ կկառուցվեն թվային հեռարձակման մասնավոր ցանցերը: Սակայն խիստ կասկածելի է, որ այդ բիզնեսը շահութաբեր լինի:

Ըստ «Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ եւ «Էրիքսոն» ընկերության միջեւ կնքված պայմանագրի՝ հանրապետությունում թվային հեռահաղորդման եւ հեռարձակման կազմակերպման աշխատանքները բաժանված են երեք փուլի: Դրանք պայմանականորեն կարելի է կոչել քննարկման, իրականացման եւ շահագործման փուլեր:

Աշխատանքների առաջին փուլը նախատեսում է գոյություն ունեցող ենթակառուցների (հեռուստաաշտարակներ, կապիտալ շինություններ, ճանապարհներ, հոսանքագծեր եւ այլն) ֆիզիկական վիճակի եւ տեխնիկական հագեցվածության ուսումնասիրություն, թվային հեռարձակման ցանցի նախագծային աշխատանքների պատվիրում եւ իրականացում, միջոցառումների պլանի մշակում, տեխնիկական սարքավորումների մատակարարների ընտրություն, նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերի մշակում եւ պատրաստում, տեխնիկական անձնակազմի ուսուցում եւ վերապատրաստում:

Հաջորդ՝ երկրորդ փուլով պլանավորվում է թվային ցանցի կառուցում, կայանների ու տեխնիկական սարքավորումների թեստավորում եւ վերջնական կարգաբերում: Աշխատանքների երրորդ փուլը նախատեսում է թվային հեռարձակման ցանցի օպտիմիզացում, անալոգային հեռարձակման անջատում, թվային ցանցի ղեկավարում, դրա որակական ցուցանիշների չափում, ընթացիկ սպասարկում:

Նշվածներից բացի կա եւս երեք տեխնիկական խնդիր, որոնց վրա հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել:

Դրանցից առաջինը թվային հեռարձակման պահուստային հնարավորության նախատեսումն է, այլ ձեւակերպմամբ՝ հեռահաղորդման ցանցի այլընտրանքային (պահուստային) ուղիների ընտրության հնարավորության նախատեսումը: Դա թվային հեռարձակման հանրապետական ցանցի նախագծման եւ կառուցման հիմնական պահանջներից է: Այդ տեսանկյունից՝ առաջարկվող թվային ցանցի կառուցվածքը թույլ է տալիս առանձին տեղամասերի վթարի դեպքում թվային տեսաազդանշանը տվյալ տարածաշրջան հասցնել շրջանցիկ ճանապարհով:

Բացի վերոգրյալից, առաջարկվում է նաեւ թվային հեռահաղորդման ցանցի պահուստային ուղիների ապահովման երկու այլընտրանքային տարբերակ.

ա. Հաշվի առնելով որոշ միջազգային փորձը եւ նկատի ունենալով այն հանգամանքը, որ կառուցվող թվային հեռարձակման հանրապետական ցանցի տարբերակը նախատեսում է միկրոալիքային ռադիոգծերի համար անհասանելի վայրերում արբանյակային ընդունմամբ հեռուստակայանների կառուցում, առաջարկվում է ցանցի մնացած հեռուստակայաններում (բացի Երևանից) նույնպես տեղադրել արբանյակային ընդունիչ կայաններ եւ ոչ թե հաստիքային իրավիճակներում համապետական մուլտիպլեքսի հեռահաղորդումը հանրապետությունում իրականացնել արբանյակային կապի միջոցով: Այս մոտեցումը կպահանջի նախնական հաշվարկներով մոտ 160 հազար ԱՄՆ դոլար լրացուցիչ ֆինանսական ներդրում, բայց կապահովի հանրապետական մուլտիպլեքսի հեռահաղորդման այլընտրանքային տարբերակի առկայությունը: Պետք է նշել, որ այս

տարբերակը կարելի է իրականացնել նաև թվային հեռարձակման հիմնական ցանցի կառուցումից հետո, դրա զարգացման հնարավոր ծրագրի շրջանակներում:

բ. Տեղեկատվական եւ բարձր տեխնոլոգիաների արագ զարգացումը եւ էլեկտրոնային հասարակության ձեւավորումը ենթադրում է նաև, մասնավորապես, օպտիկամանրաթելային նոր ցանցերի կառուցում Հայաստանի ողջ տարածքում: Համաձայն ՀՀ կառավարության 2010թ. փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձեւավորման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 7 արձանագրային որոշման՝ նախատեսվում է ՀՀ ամբողջ տարածքում՝ ներառյալ գյուղական վայրերում, անցկացնել 100 Մբ/վրկ թողունակությամբ հաջորդ սերնդի լայնաշերտ ցանց, որի հիմնական հանգույցներից քաղաքացիների տներ եւ բնակարաններ կապը կընդլայնվի հիբրիդ ձեւով (Wi-Max, օպտիկամանրաթելային եւ այլն)՝ միջին ժամկետում ապահովելով օպտիկամանրաթելային ցանցի հասանելիությունը դեպի տուն:

Նկատի ունենալով նման ցանցերի տեխնիկական բնութագրերը եւ դրանց միջոցով հեռահաղորդվող թվային հոսքերի պաշտպանվածությունը արտաքին խանգարումներից, առաջարկվում է օպտիկամանրաթելային ցանցերը նույնպես դիտարկել որպես պահուստային ցանց թվային հեռուստառադիոհեռարձակման կազմակերպման համար: Որպես թերություն պետք է նշել այն, որ օպտիկամանրաթելային մալուխային ցանցերը Հայաստանում հիմնականում հանդիսանում են մասնավոր ընկերությունների սեփականությունը այն դեպքում, երբ համաձայն «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի՝ կառուցվող թվային հեռուստառադիոհեռարձակման հանրապետական ցանցը հանդիսանում է պետության սեփականությունը:

Լուծման կարոտ երկրորդ տեխնիկական խնդիրը խորհրդատվական եւ սպասարկման կենտրոնների (call centers) գործունեության կազմակերպումը եւ վերահսկումն է:

Այդ կենտրոնների ստեղծումն ունի կարելուր սոցիալական նշանակություն, սակայն նախ պետք է լուծել սրա հետ կապված տեխնիկական խնդիրները: Որպես այդ կենտրոնների բաղկացուցիչ մաս անհրաժեշտ է հիմնել «թեժ գիծ», որը հնարավորություն կտա բնակչությանը ծրագրի իրականացման ողջ ընթացքում եւ դրանից հետո ստանալ սպառիչ պատասխաններ բոլոր հուզող հարցերին (կապված թվային հեռուստատեսային կցուրդների եւ անտենա-մալուխային համակարգերի միացման աշխատանքի եւ այլնի հետ), ինչպես նաև արագ տեխնիկական աջակցություն՝ առաջացած խնդիրների պարագայում: Նման կենտրոնների քանակը պետք է որոշվի ըստ սպասարկվող տարածքների մեծության եւ շահառուների թվի:

Կենտրոնների գործունեության արդյունավետությունը վերահսկելու նպատակով անհրաժեշտ է պարբերաբար հավաքագրել եւ վերլուծել այնպիսի վիճակագրական տվյալներ, ինչպիսիք են ստացված հեռախոսագանգերի քանակը եւ բնույթը, կատարված այցերի քանակը եւ այլն: Պետք է ստեղծել նաեւ հատուկ ինտերնետային կայք, որի միջոցով ցանկացողները նույնպես կարող են ստանալ անհրաժեշտ խորհրդատվություն:

Թվայնացման գործընթացի արդյունավետությունն ապահովելու եւ նախանշված նպատակներին ծառայեցնելու համար կարելու է մանրակրկիտ մշտադիտարկման ենթարկել տեղի ունեցող զարգացումները: Դա ենթադրում է ծրագրի իրականացման ողջ ընթացքում ներգրավված բոլոր պետական եւ մասնավոր կառույցներից տարբեր տեսակի քանակական եւ որակական տվյալների հավաքագրում, ինչպես նաեւ բնակչության եւ հեռուստաընկերությունների շրջանում կարծիքի հարցումների անցկացում: Հավաքագրված տվյալներն այնուհետեւ ենթակա են վերլուծության՝ հետազայում աշխատանքները կատարելագործելու նպատակով:

Եվ, վերջապես, երրորդը բնակչության համար թվային հեռուստատեսության հասանելիության ապահովումն է: Դրա համար անհրաժեշտ է նաեւ թվային կցուրդների (set-top-box) եւ անտենա-մալուխային սարքավորումների ներկրում ու դրանց վաճառքի կազմակերպում (իսկ անապահով ընտանիքներին՝ անվճար տրամադրում), սպառողներին տեխնիկական աջակցության ցուցաբերում եւ սպասարկման ծառայությունների մատուցում:

Թվային կցուրդների ընտրության հարցը առնչվում է եթերային թվային հեռուստատեսության սպառողների ճնշող մեծամասնությանը: Այդ սարքերի ընտրությունը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով անհրաժեշտ եւ բավարար տեխնիկական չափանիշները՝ նախապատվությունը տալով գնային օպտիմալ տարբերակին:

Թվային կցուրդների արտադրությունը արտերկրում վաղուց լայնորեն կազմակերպված է, եւ խնդիրը բնակչության համար կարող է լինել միայն առաջարկվող բազմազանությունից ճիշտ ընտրություն կատարելը: Հարցը կարելի է լուծել վերը նշված սպասարկող խմբերի եւ բնակչության բավարար տեղեկացվածության միջոցով: MPEG-4 ստանդարտի թվային կցուրդների գինը միջազգային շուկայում այսօր տատանվում է 20-100 ԱՄՆ դոլարի սահմաններում եւ ունի հետագա նվազման միտում:

ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ

Ժամանակակից հաղորդակցության տեխնոլոգիաների եւ նոր մեդիայի սրընթաց զարգացումը նկատելիորեն լայնացնում է քաղաքացիների հնարավորությունները իրենց հարկավոր եւ հարմար տեղեկատվության աղբյուր ընտրելիս: Սրա հետ կապված որոշ փորձագետներ համարում են, որ վերգետնյա եթերային հեռարձակման թվայնացումը կորցնում է հրատապությունը: Սակայն երկու կարեւոր հանգամանք վկայում են հակառակը: Նախ, համաձայն 2013թ. կատարած հետազոտությունների, Հայաստանի բնակչության 80 տոկոսի համար հեռուստատեսությունը դեռեւս մնում է ինֆորմացիայի հիմնական աղբյուր, եւ երկրորդ, պաշտոնական տվյալներով, երկրի բնակչության մոտ մեկ երրորդը աղքատ է, եւ հասարակության այդ պատկանելի շերտը հազիվ թե հնարավոր համարի օգտվել վճարովի հեռուստատեսությունից: Հետեւաբար, նա պետք ապավինի անվճար «սոցիալական փաթեթին» («must carry») վերգետնյա հեռարձակմամբ եթեր տրվող հեռուստածրագրերին, որոնք, համաձայն միջազգային պարտավորությունների եւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ գործող օրենքի, 2015թ. հուլիսի 1-ից պետք է անցնեն թվային համակարգի:

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի գնահատականով, թվային հեռարձակման անցնելուց հետո երկրի հեռուստալսարանի շուրջ 50 տոկոսը օգտվելու է «սոցիալական փաթեթից»: Այս կանխատեսումը հիմնավորվում է նախ եւ առաջ նրանով, որ Հայաստանում աղքատության իրական մակարդակը, անկախ փորձագետների պնդմամբ, էականորեն բարձր է պաշտոնական տվյալներից եւ կազմում է ավելի քան 40 տոկոս: Բացի այդ, բնակչության մի որոշակի մաս, կենսամակարդակով գտնվելով աղքատ ու միջին խավերի արանքում, ակնհայտորեն նույնպես շոայլություն կհամարի հեռուստատեսության համար վճարելը եւ կբավարարվի անվճար հեռուստածրագրեր դիտելով: Եւ, վերջապես, իր դերն ունի նաեւ սովորույթի գործոնը. «Եթե ամբողջ կյանքում չենք վճարել, ինչո՞ւ պետք է հիմա վճարենք»:

Բայց այս կանխատեսումները թեեւ մոտ են իրականությանը, այսուհանդերձ գիտական ճշգրտությամբ չեն արտացոլում այն իրավիճակն ու շուկայի հեռանկարները, որոնք ի հայտ կգան թվային հեռարձակման անցնելով: Համապատասխան հետազոտությունները պետք է կատարեր պետությունը: Դա, մասնավորապես, նախատեսվում է ՀՀ կառավարության հաստատած «Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգով»: Դրա 7-րդ կետում նշված է, որ թվայնացման գործընթացի արդյունավետության ապահովման կարեւոր մեխանիզմներից է հասարակական

կարծիքի եւ շուկայի շարունակական ուսումնասիրումը, որի ընթացքում անհրաժեշտ է նաեւ ճշտել Հայաստանում թվային հեռուստացույցների տարածվածության եւ հեռուստակապուղիների օգտագործման դինամիկայի վերաբերյալ տվյալները: Այստեղ ընդգծված է նաեւ «սպառողների տեսակետների եւ հավելյալ ծառայությունների համար վճարելու պատրաստակամության» մանրակրկիտ հետազոտությունն անցկացնելու անհրաժեշտությունը:

2014 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ, սակայն, թվայնացման անցնելու համար պատասխանատու պետական կառույցները նման հետազոտություններ չեն անցկացրել: Գործնականում ոչինչ չի արվել նաեւ հեռարձակման թվայնացումից սպասվող արդյունքների, դրա ժամկետների, նպատակների եւ խնդիրների մասին հասարակությանն իրազեկելու համար: Մինչդեռ Հայեցակարգի երկրորդ մասում, որը վերնագրված է «Ռազմավարության հիմնական նպատակները», նշված է, որ անհրաժեշտ է «տեղեկացնել եւ նախապատրաստել շահագրգիռ կողմերին» թվային հեռարձակմանն «անցումն արդյունավետ իրագործելու համար»:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ թվայնացումը հաջող է անցել այն երկրներում, որտեղ իրականացվել է հասարակական համաձայնության մթնոլորտում, այդ գործընթացում քաղաքացիների լայն ներգրավվածության պայմաններում: Հատկանշական է, օրինակ, Էստոնիայի փորձը, որտեղ թվային հեռարձակման անցնելու ավարտի հստակ ժամկետներ էին սահմանված, եւ բոլոր գործողությունները կատարվեցին սահմանված ժամանակացույցով: Ընդ որում, գլխավոր գործոններից մեկը, որը թույլ չէր տալիս խախտել ժամկետները, բնակչության մեջ քարոզչական-ուսուցողական արշավն էր, որի շնորհիվ թվայնացման գործընթացը մշտապես գտնվում էր Էստոնիայի քաղաքացիների ուշադրության կենտրոնում, եւ ամենքը գիտեին, թե ինչ է հարկավոր անել թվային հեռարձակմանը միանալու համար:

Ի տարբերություն դրա, Հայաստանի իշխանությունները գնացին թվային հեռարձակմանն անցնելու իրենց որոշումները հասարակության վզին փաթաթելու ճանապարհով: Սկսած 2009-ից, երբ հաստատվեց հիշատակված Հայեցակարգը, եւ 2010-ին, երբ արմատական փոփոխություններ եւ լրացումներ կատարվեցին «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքում, կառավարությունը առաջ մղեց թվային հեռարձակման իր տեսլականը: Իսկ տեղական լրագրողական միավորումների, հասարակական այլ կազմակերպությունների, միջազգային կառույցների կարծիքներն ու առաջարկությունները, որպես կանոն, անտեսվեցին:

Սրա հետ մեկտեղ, թվայնացման համար պատասխանատու պետական կառույցները չմշակեցին եւ չիրականացրին թվային հեռարձակման անցնելու մասին

հասարակությանն իրազեկելու, քաղաքացիներին այդ գործընթացին նախապատրաստելու, նրանց խորհրդատվական ծառայություններ մատուցելու միջոցառումների ծրագիր: Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեին օգոստոսին տված հարցազրույցում «Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ գլխավոր տնօրեն Գրիգոր Ամալյանն ասաց, որ այդ աշխատանքները կսկսվեն 2014թ. սեպտեմբերից: Բայց միջազգային փորձը վկայում է, որ քարոզչական, ուսումնական եւ տեղեկատվական արշավները, սոցիալական այլակցիաները՝ կապված թվային հեռարձակման անցնելու հետ, հարկ էր իրականացնել օրենսդրական, տեխնիկական եւ այլ միջոցառումների զուգահեռ: Այս տեսանկյունից 2010 թվականից մինչև 2014-ի սեպտեմբեր ընկած ժամանակահատվածը կարելի է համարել անդառնալիորեն կորած:

Մակայն թվայնացման հետ կապված թերեւս ամենազգայուն սոցիալական հիմնախնդիրը բնակչության անապահով խավին աջակցություն ցուցաբերելն է, այն հաշվով, որ անալոգային հեռարձակումն անջատելուց հետո նրանք շարունակեն հեռուստաազդանշան ստանալ: Հասկանալի է, որ երկրի քաղաքացիների այդ հատվածը օգտվում է հին հեռուստացույցներից, որոնք չեն կարող ստանալ թվային ազդանշան, եւ պետությունը պարտավոր է օգնել նման ընտանիքներին:

Աջակցությունը կարող է լինել կամ միանվագ դրամական օգնության տեսքով, որը նախատեսված լինի անալոգային ազդանշանը թվայինի վերածելու սարքեր (դեկոդերներ) ձեռք բերելու համար, կամ այդ նույն սարքերը անվճար տրամադրելով:

Կառավարության հաստատած Հայեցակարգում նախատեսված է. «Սուբսիդավորել ՀՀ ընտանիքների անապահովության գնահատման հանրապետական համակարգում հաշվառված ընտանիքներին՝ թվային կցուրդներ ձեռք բերելու նպատակով: Բնակչությանը մատչելի եւ որակյալ կցուրդների ապահովման նպատակով սոցիալական կցուրդների համար հայտարարել պետական բաց տենդեր...»: Երբ մշակվում էր այդ փաստաթուղթը, դեռեւս պարզ չէր, թե հատկապես ինչ ձեւով է ցուցաբերվելու աջակցությունը: Այժմ պետությունը կարծես կողմնորոշվել է. անապահով ընտանիքներին տրամադրվելու են թվային կցուրդներ (դեկոդերներ), քանի որ մեծ է հավանականությունը, որ դրամական օգնությունը ոչ բոլոր դեպքերում կծառայի նպատակին, եւ թվային հեռարձակման պայմաններում հեռուստածրագրերի համընդհանուր մատչելիության խնդիրը կմնա չլուծված:

Բայց խնդրահարույց է մնում մեկ այլ հարց. հատկապես քանի՞ ընտանիք կստանա անվճար սարք: Հիշատակված հարցազրույցում Գրիգոր Ամալյանը, հղում անելով թվայնացման Հայեցակարգին, նշեց, որ անվճար թվային սարքեր կստանա 100.000 ընտանիք: Մինչդեռ Հայեցակարգի 11-րդ էջում նշված է մեկ այլ թիվ՝ 150.000:

Այս առնչությամբ ԽԱՊԿ-ն ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն հարցում է հղել, որին ի պատասխան՝ հաղորդվել է, որ 2014թ. մայիսի 1-ի դրությամբ երկրում գրանցված է շուրջ 130.000 անապահով ընտանիք:

Այս թվերի պարզ համադրությունը հանգեցնում է բավականին տազնապալի եզրակացության. տասնյակ հազար ընտանիքներ, գրանցված լինելով անապահովների ցուցակում, կարող են չստանալ անվճար դեկոդերներ եւ 2015-ի հուլիսի 1-ից, երբ նախատեսված է անջատել անալոգային հեռարձակումը, հնարավորություն չեն ունենա ընդունել հեռուստաձրագրեր: Ճիշտ է, ինչ-որ չափով միխթարում են իշխանության հավաստիացումները, թե անալոգային հեռարձակումը չեն անջատի այնքան ժամանակ, քանի դեռ թվայնացման պայմաններում ամբողջովին չի լուծվի հեռուստաազդանշանի հասանելիության հարցը ամբողջ բնակչության համար: Սակայն թվային հեռարձակմանն անցնելու գործընթացում, սկսած 2010-ից, երբ քննարկվում էին օրենսդրական փոփոխություններն այս ոլորտում, հասարակությունը քիչ առիթներ չի ունեցել թվայնացման համար պատասխանատու պետական կառույցներին չվստահելու եւ նրանց խոստումներին չհավատալու:

Իմիջիայլոց, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության պատասխան նամակում նշված է նաեւ, որ անվճար թվային կցուրդների տրամադրման վերաբերյալ նորմատիվ ակտերի ընդունումից հետո այդ նպատակի համար նախապատրաստվելու է անապահով ընտանիքների ցուցակը: Այլ խոսքով, առկա ցուցակը կարող է կրճատվել եւ համապատասխանեցվել հիշատակված ավելի փոքր թվին՝ 100.000 ընտանիք: Հնարավոր է, դա թույլ կտա ձեւականորեն լուծել անապահով ընտանիքներին պետական աջակցություն ցուցաբերելու խնդիրը թվային հեռարձակման անցնելիս: Բայց նման մոտեցման դեպքում տասնյակ հազարավոր ընտանիքներ, որոնք օգնության կարիք են զգում, անհիմն կերպով կանտեսվեն եւ կբախվեն սոցիալական անարդարության: Այդ պատճառով անհրաժեշտ է առավել մանրակրկիտ ուսումնասիրել իրավիճակը եւ հասցեագրված աջակցություն ցուցաբերել բոլոր անապահով ընտանիքներին:

Ընհանուր առմամբ, հեռարձակման թվայնացման հետ կապված սոցիալական հարցերը, օրենսդրական հիմնախնդիրների հետ միասին, բարձիթողի վիճակում են: Ըստ էության, 5 տարիների ընթացքում, որ անցել են Հայեցակարգի ընդունման պահից, ոչինչ չի արվել դրանք լուծելու համար: Այդ իսկ պատճառով դեռեւս 2010թ. Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի մշակած առաջարկությունները թվայնացման գործընթացի սոցիալական բաղադրիչի վերաբերյալ այսօր էլ պահպանում են իրենց արդիականությունը:

Մասնավորապես, չնայած բաց թողնված ժամանակին, թեկուզ եւ թվային հեռարձակմանն անցնելու վերջին տարում անհրաժեշտ է նախաձեռնել տեղեկատվական-ուսուցողական բնույթի լայնածավալ ծրագիր, որը հասցեագրված կլինի հասարակության բոլոր խավերին: Դրա բաղկացուցիչը կարող են լինել.

- Մոցիալական գովազդի պատրաստումը եւ հեռարձակումը հեռուստատեսությամբ եւ ռադիոյով, նաեւ՝ հրապարակումը թերթերում, համացանցում եւ այլուր:

- Տեղեկատվական-ուսուցողական բնույթի բրոշյուրների եւ թերթիկների կազմում եւ տարածում երկրի բոլոր բնակավայրերում, տնտուս, ճիշտ այնպես, ինչպես նախընտրական քարոզարշավներում տարածում են թեկնածուների բուկլետները: Այդ թերթիկները հեռուստալսարանին պետք է մատուցեն ամենաանհրաժեշտ տեղեկությունները թվային հեռարձակմանն անցնելու վերաբերյալ, ինչպես նաեւ տեղեկություններ պարունակեն հետադարձ կապի հնարավորության մասին:

- Ուսումնական դասընթացների կազմակերպում դպրոցներում եւ բուհերում, որ երիտասարդ սերունդը ձեռք բերի տեխնիկական գիտելիքներ եւ հմտություններ թվային հեռարձակումից օգտվելու համար: Տվյալ դեպքում դպրոցականներն ու ուսանողները առավել նախընտրելի նպատակային խմբեր են, քանի որ նրանք արագ կյուրացնեն այդ գիտելիքներն ու հմտությունները եւ կփոխանցեն դրանք ընտանիքի անդամներին, ազգականներին եւ ընկերներին:

- Ուսուցողական սեմինարների եւ շնորհանդեսների, ինչպես նաեւ հեռուստահաղորդումների կազմակերպում երկրի տարբեր շրջաններում՝ տարրական գիտելիքների եւ հմտությունների լայն տարածման նպատակով, որոնք անհրաժեշտ են թվային հեռուստահեռարձակումից օգտվելու համար:

- Հատուկ կայքի ստեղծում, որը պետք է տեղեկատվություն պարունակի Հայաստանում անալոգայինից թվային հեռարձակմանն անցնելու մասին եւ բաղկացած լինի բաժիններից, որոնք հակիրճ եւ մատչելի ներկայացնեն.

- ա. ի՞նչ է թվային հեռարձակումը,

- բ. ի՞նչ է հարկավոր իմանալ հեռուստադիտողին՝ թվային հեռարձակմանն անցնելիս,

- գ. ի՞նչ սարքավորումներ են անհրաժեշտ եւ որտեղի՞ց կարելի է ձեռք բերել,

- դ. սոցիալական ի՞նչ խմբերի են անվճար տրամադրվելու սարքավորումներ և ինչպե՞ս:

- Հեռախոսային անվճար «թեժ գծի» բացում, որով քաղաքացիները կարող են խորհրդատվություն ստանալ թվայնացման պայմաններում ձեռք բերված

սարքավորումների վերաբերյալ, տեղեկատվություն ստանալ թվային ծառայություններ մատուցող ընկերությունների եւ այլնի մասին:

Անցումային փուլում «Թեժ գծով» երկրի բոլոր մարզերից եկող ինֆորմացիան ծագող տեխնիկական խնդիրների վերաբերյալ ոչ միայն կնպաստի այդ խնդիրների օպերատիվ լուծմանը, այլեւ կդառնա թվային հեռարձակման որակի դիտարկման գործիք:

Հեռուստացույց եւ թվային սարքավորում գնող քաղաքացիներին կողմնորոշելու համար առաջարկվում է ստեղծել երաշխիքային հատուկ նշան եւ հատկացնել այն կազմակերպություններին, որոնք Հայաստան են ներկրում թվային հեռարձակման տեղական չափորոշիչներին համապատասխանող սարքավորումներ: Դա կնվազեցնի ներկայացվող պահանջներին չբավարարող տեխնիկայի ներկրումը, եւ, ամենակարեւորը՝ գնորդին թույլ կտա վստահ լինել ճիշտ ընտրության եւ ձեռք բերված ապրանքի որակի հարցերում:

Շատ կարեւոր է, որ նաեւ լրատվամիջոցները ակտիվորեն լուսաբանեն թվայնացմանն առչնվող թեմաները: Այդ գործունեության խրախուսման համար անհրաժեշտ է մրցանակներ սահմանել համազգային եւ տեղական այն ՁԼՄ-ների համար, որոնք կպատրաստեն տեղեկատվական-ուսուցողական հատուկ հրապարակումներ եւ կթողարկեն թվային հեռարձակմանն անցնելու վերաբերյալ հաղորդաշարեր, լավագույնս կլուսաբանեն թվայնացմանն առնչվող հիմնախնդիրները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թվայնացման՝ վերը ներկայացված երեք բաղադրիչներից՝ օրենսդրական, տեխնիկական, սոցիալական, առավել առաջատար դիրքերում տեխնիկական ուղղվածությունն է: 2014թ. փետրվարի 27-ին ՀՀ կառավարության թիվ 193N որոշումը ընդունելուց հետո, որով հաստատվեց միջոցառումների նոր ժամանակացույցը, նկատելիորեն ակտիվացավ թվային հեռարձակման համակարգի կառուցման գործընթացը:

Թեեւ 2012-2013թթ.անցկացված մրցույթները, որոնցով ի հայտ պիտի գային այն ընկերությունները, որոնց կվստահվեր այդ աշխատանքների իրականացումը, սկզբում հայտարարվեցին չկայացված (հաղթողի բացակայության պատճառով), այնուամենայնիվ նոր մրցույթում հայտնի դարձավ այդ ընկերությունը. դա շվեդական «Էրիքսոնն» է: Այն «Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի հետ, որը ՀՀ կապի եւ տրանսպորտի նախարարության կառուցվածքային

ստորաբաժանումներից է, կառուցում է թվային հեռարձակման համակարգը: 2014թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ միջոցառումները իրականացվում են հաստատված ժամանակացույցին համապատասխան:

Մրա հետ մեկտեղ, ԽԱՊԿ անցկացրած մշտադիտարկման ընթացքում բացահայտվեց լուրջ հիմնախնդիր, որը արտացոլված չէ կառավարական «Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգում», չի կարգավորվում «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ գործող օրենքով եւ կարող է հանգեցնել երկրի բնակչության որոշ մասի՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտմանը: Մասնավորապես, թվային հեռարձակման ենթակառուցվածքների ստեղծման ընթացքում պարզվեց, որ կապի մայրուղիներից հեռու եւ բարդ ռելիեֆային տեղանքում գտնվող գյուղերում, որոնք անհասանելի են միկրոալիքային ռադիոգծերի համար, բնակիչները չեն կարող ընդունել իրենց մարզային հեռուստաընկերությունների ծրագրերը եւ ստիպված են լինելու սահմանափակվել միայն համահանրապետական մուլտիպլեքսի հեռուստածրագրերի փաթեթով, որը կհեռարձակվի արբանյակի միջոցով: Այդ պրոբլեմը պահանջում է ոչ ստանդարտ լուծման փնտրտուք, քանի որ պաշտոնական տվյալներով, այդպիսի գյուղերի բնակիչները կազմում են երկրի բնակչության մոտավորապես 5 տոկոսը: Մարզային հեռուստաընկերությունների համար չլուծված այս խնդիրը կհանգեցնի նաեւ պոտենցիալ լսարանի 5 տոկոսի կորստի:

Անալոգայինից թվային հեռարձակմանն անցնելուն մնացել է մեկ տարուց էլ քիչ, սակայն չլուծված են մնում օրենսդրական բազմաթիվ հիմնախնդիրներ:

«Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքը կարիք ունի արմատական բարեփոխման եւ արդիականացման: Այդ պատճառով Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն գործընկեր կազմակերպությունների՝ Երեւանի մամուլի ակումբի եւ Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի հետ ձեւավորել է աշխատանքային խումբ, որը մշակել է հեռարձակման օրենսդրության մեջ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու նոր օրինագիծ: Այդ փաստաթուղթը նախատեսվում է ներկայացնել գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի հարցերով խորհրդարանական մշտական հանձնաժողով, իսկ պետական տարբեր կառույցների, շահագրգիռ հասարակական միավորումների եւ միջազգային կառույցների հետ մանրակրկիտ քննարկումներից հետո կներկայացվի ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը եւ կառաջարկվի ընդունել այն:

2014թ. սեպտեմբերի 1-ի տվյալներով, առանձնապես բարձիթողի վիճակում է հեռարձակման թվայնացման գործընթացի սոցիալական բաղադրիչը: Պետությունը գործնականում ոչինչ չի արել բնակչությանը տեղեկացնելու՝ անալոգայինից թվային

հեռարձակմանն անցնելու, այդ գործընթացի նպատակների, սպասվող արդյունքների, նոր տեխնոլոգիայի լիարժեք օգտագործման համար անհրաժեշտ գործողությունների կատարման մասին: Չի անցկացվել հասարակական կարծիքի ուսումնասիրություն, որը թույլ կտար օբյեկտիվ տվյալներ ստանալ թվայնացմանը սպառողների վերաբերմունքի, հավելյալ ծառայությունների համար վճարելու նրանց պատրաստակամության մասին: Մանավանդ որ նման միջոցառումներ նախատեսված էին կառավարության «Ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգում»:

Եվ, վերջապես, թվայնացմանն առնչվող առավել պրոբլեմային սոցիալական հարցը մնում է անապահով ընտանիքներին անվճար դեկոդերների հատկացումը, որոնք թույլ կտան նրանց ստանալ թվային ազդանշան: Հիշատակված Հայեցակարգում նախատեսված է, որ նման սարքերով անհրաժեշտ է ապահովել 150.000 ընտանիքի: Այսօր կառավարությունը մտադիր է ձեռք բերել դեկոդերներ 100.000 ընտանիքի համար: Մինչդեռ, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության տվյալներով, 2014թ. մայիսի 1-ի դրությամբ երկրում գրանցված է շուրջ 130.000 անապահով ընտանիք: Կստանա՞ն արդյոք բոլորը անվճար դեկոդերներ. մեծ մասամբ դրանից է կախված հասարակական համաձայնության պայմաններում երկրում թվային հեռարձակմանը անցումն ապահովելու հնարավորությունը: